## Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտութիւնների Ակադեմիա-յի ողջոյնի նամակը (1) առ

Արժանայարգ

Հայր Ղեւոնդ վարդապետ Տայեան,

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի ներկայացուցիչները 1946 թուականին այցելեցին Ս. Ղազար կղզում Վենետիկեան Մխիթարեանց Միաբանութիւնը: Նրանք ջերմ ընդունելութիւն գտան այնտեղ, և Միաբանութիւնը մեծ աջակցութիւն ցոյց տուեց նրանց գիտա-հետազօտական աշխատանքում: Մեր ներկայացուցիչների Երեւան վերադարձին ես լսեցի, որ Դուք երաժշտական ասպարէզում մեծ մասնագէտ էք և երկարամեայ արդիւնաւէտ աշխատանքով ստեղծագործել էք բազմաթիւ երկեր-շարականներ:

Յատկապէս ուրախութեամբ իմացայ, որ այդ երգերը ձայնագրելու համար Դուք եւրոպական նօտագրութեանը լրացուցիչ ձայնանիշներ էք հնարել և այդ ասպարէզում մեծ տեսական աշխատանք էք տանում:

Գիտութիւնների Ակադեմիայի երաժշտութեան պատմութեան ու տեսականի սեկտորը, որի ղեկավարն եմ ես, ներկայումս յատուկ ուշադրութիւն է դարձնում հայկական եկեղեցական երաժշտութեան, նրա զանազան սեռերի, նոյնպէս և եկեղեցական հին նօտագրութեան ուսումնասիրութեանը:

Մեր այս սեկտորի առանձին աշխատակիցները պարապում են շարականների, տաղերի, մեղեդիների կոմպոզիցիոն ձեւերի հետազօտութեամբ. ուրիշներ ուսումնասիրում են դ-ձայների առանձնայատկութիւնները. աշխատակիցների մի երրորդ խումբ զբաղուած է հին խազերի վերծանման խնդրով, և այլն: Ամէն մի նոր տուեալ բոլոր յիշեալ ասպարէզներում, յատկապէս խազագիտութեան ասպարէզում, մեզ չափազանց հետաքրքրում է:

Մեզ համար խիստ շահեկան կը լինէր ծանօթանալ Ձեր երաժշտական կոմպոզիցիաների հետ:

Փորձերի փոխանակութեան կարգով՝ մեր կողմից պատրաստ ենք ուղարկել Ձեզ Հայաստանում հրատարակուող բոլոր երաժշտական ու երաժշտագիտական նիւթերը:

Վստահ ենք, որ մեր դիմումը ջերմ ընդունելութիւն կը գտնի Ձեր կողմից և հետագայում մեր միջեւ կապը կ'ամրապնդուի յանուն մեր Հայրենիքի և մեր ժողովրդի երաժշտական կուլտուրայի ծաղկման:

Ի նշան իր յարգանքի Ձեզ և երաժշտական ասպարէզում Ձեր բեղմնաւոր գործունէութեան՝ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի երաժշտութեան պատմութեան ու տեսականի սեկտորը մատուցում է Ձեզ Սպենդիարովի երկերի հաւաքածոյի առաջին հատորը:

Յարգանքներով

(ստորգր.) Խ. ՔՈՒՇՆԱՐԵԱՆ

27 Նոյեմբերի 1947 թ.

Երեւան,
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի երաժշտութեան պատմութեան ու տեսականի սեկտոր՝
Պրոֆէսոր Քուշնարեան

(1) Ընթերցողներու դիւրութեան համար արտասահմանեան ուղղագրութեան վերածուած է նամակը:



## ԿՈՅՐԻՆ ԵՐԳԸ

Երգը կոյրին՝ հեծակարկաջ մեղեդի,
Գիշերանուագ ողբ ու կական է ծըփուն,
Աղի արցունք իր կոյր աչքէն կը կաթի՝
Կեանքն ու շարժումն երբոր հըպին այտերուն:

Սիրտն իր անտա՜ռ մրըրկադող, սիրտն իր քընա՛ր տրտմալար,
Օ՜ ինչ հծծիւն անսպառ, օ՜ ինչ մորմոք ողբերախ,
Կոյրը կ'երգէ իր ցաւին անհունութիւնը թշուառ
Իր գիշերին մէջ անվերջ, իր մտքին հետ միապաղաղ:

— «Ո՜վ իմ Աստուած, ո՜վ դու բրուտ, շունչ կաւեղէն էակիս,
Դուն որ ձեռքովդ կազմեցիր հոգւոյս ընկեր սա մարմինն,
Ինչո՞ւ անվառ թողուցիր զոյգ կանթեղներն իմ աչքիս,
Որ ես յաւէտ խարխափեմ ապերջանիկ, զայրագին:

Ամէն գիշեր, կ'ըսեն ինծ, երկինքին վրայ կը վառին
Զքնաղ աստղեր անհամար, յաւերժութեան լապտերներ,
Օ՜ Տէր իմ, գէթ անոնցմէ մէկուն լոյսն իմ խաւարին
Մէջը պարպէ, որ իմ ալ գիշերն հրճուի լուսահեր:

Անհուն տենչով, խոռոչներն իմ անթափանց աչքերուն,
Ես կը յառեմ ամէն օր վառ արեւուն, ու անոր
Բոցին տակ երբ ջերմանան մարած կոպերըս սարսուռն,
Ի՜նչքան կ'ըղձամ որ իյնայ բիբիս մէջ գէթ կայծ մ'անոր:

Կ'ըսեն թէ կան զմրուխտեայ զըւարթ մարգեր ընդարձակ,
Ուր կը խայտայ մանկութիւնն, ուր ծաղիկներ կան սնդուս,
Ծովե՜ր կապոյտ խաժալանջ, անդունդներով անյատակ,
Անոնց խո՜րն է ինկած միթէ մարգարիտն աչքերուս:

Գեղգեղումներ կը լսեմ՝ լռութիւններ դաշնակող,
Անտառներու երգին հետ՝ զուգամանակ և միատիք.
Բայց ի լուր այդ բոլորին՝ ես կ'ազմըկիմ սրտադող,
Հեղեղօրէն կ'արտասուեմ ու կը գոռամ զերդ մըրրիկ:

Ա՜հ, մայր իմ, մայր կարեվէր, որ իմ ցաւովս կը տրորիս,
Ես արգանդիդ պտուղն անարգ, թշուառ բեկոր մարդկութեան,

Մինչեւ երբ այսպէս պիտի անարշալոյս փակեմ զիս,
Աղջամուղջին մէջ՝ հեռու լոյսէն, կեանքէն իսկական։

Երբ սափորս իմ կաւեղէն՝ փշրըւի հուսկ անաղմուկ,
Տառապանքիս այս փոխան, կը հաւատամ ո՜վ Աստուած,
Յաւիտենի սեմին վրայ՝ ուր կը զուգուին ծիծաղ, սուգ՝
Լոյսի հեղեղ պիտի տաս հանդերձեալիդ մէջ անանց »։ —

Երգը կոյրին, հեծակարկաջ մեղեդի,
Գիշերանուագ ողբ ու կական է ծըփուն,
Աղի արցունք իր կոյր աչքէն կը կաթի՝
Կեանքն ու շարժումն երբոր հըպին այտերուն։

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

# ՔՐԻՍՏՈՍԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Առ Վեր. Հ. Ղեւոնդ Տայեան

Հայաստանի հողէն յետոյ ինձ կը ձօնէք այս ծաղիկներն,
Որպէսզի իմ բանաստեղծի քընարս հըճուի և վերանայ,
Որպէսզի իմ սիրտըս լեցուի սիրոյ խանդով և աւիւնով,
Եւ ըլլայ օրն իմ մահական՝ արեւալոյս և մըշտակայ։

Կեանքն իմ ամբողջ խինդ է այսօր և ներշնչումս յստակ և խոր,
Ես կը թեւեմ երկինքներու պայծառութեան մէջ լայնալեղ,
Առագաստներ իրենց ճերմակ թեւերն բացած հովերուն դէմ՝
Նուրբ ու թեթեւ կը յառաջեն դէպ ի կապոյտ ջինջ ափունքներ։

Ժայռերն հեռուն կը մարմրին թաւշայ լոյսին մէջ իրկունին,
Ծո՜վն հաստամեստ բերկրութիւն մ'է արհաւրական և գերհըրաշ
Իմ վերացեալ և խորարմատ երջանկութեան համար անգին։

Ծովերէ ծով, լեռներէ լեռ, թըռիր սիրտ իմ, զի մէջդ այսօր
Նըման խոկմանց և ներշնչմանց թեւահարման և զարթօնքին՝
Կը հնչէ քայլն աստուածներուն և սուրբերուն հաւատաւոր։

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

22 - 10 - 1947.



ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

# ՏՈՔԹ. ՄԱՆԱՍԷ ՍԵՒԱԿ



Ամերիկեան երկնակամարին տակ շողշողուն աստղի մը ականատես եղայ ու տակաւին աչքերս հիացումով կը պլպլան։

Հանրածանօթ գիտնական Տոքթ. Մանասէ Սեւակին անունը ինծի համար նորութիւն մը չէր, տարիներէ ի վեր հետեւած ըլլալով անոր գիտական, հանրային ու հայրենասիրական գործունէութեան։ Մեր պատահական հանդիպումները աւելի եւս հետաքրքրութեամբ առինքներ էին զիս դէպի այս մեծ գիտնականը։ Սակայն իր տան և աշխատութեան գրասենեակին մէջ իրեն հետ խօսելէ և իր գիտական աշխատանքներուն ծանօթանալէ յետոյ՝ աւելի եւս եկայ այն համոզման թէ՝ դէմ յանդիման կը գտնուէի մեծատաղանդ հայ քիմիագէտ գիտնականի մը հետ, որով կարող է հայ ժողովուրդը հպարտ զգալ։

Հազիւ յիսունը թեւակոխած և ալուպլպեղ մազերով մէկն է Տոքթ. Սեւակ, որ կ'ողջունէ հայորդական գրաւիչ ոգիով մը, որ տարիներու բարեկամութիւնն ու անկեղծ յարաբերութիւնը միայն կրնան թելադրել։ Իր խոնարհութիւնը խոտոր կը համեմատի իր գիրքին ու համբաւին տիրացած գիտնականի մը մեծավայելուչ պատկառելիութեան հետ։ Անիկա հետդ կը խօսի առանց ձեւակերպութեան, առանց արուեստականութեան և մաքուր հայերէնով մը, որուն վրայ չէ կրցած դարու մը գիտական հետազօտութեանց անգլիերէնն իսկ ո՛և է առոգանութեան կամ շեշտի խաթարիչ ազդեցութիւն ունենալ։

Հայ գիտնականը հաւասար հմտութեամբ ու հեղինակութեամբ կը խօսի որքան իր մասնագիտութեան՝ նոյնքան և գրական և հասարակական խնդիրներու շուրջ։

Հակառակ այն իրողութեան որ Տոքթ. Սեւակ կապուած է ամերիկեան բարձրագոյն գիտական ու հետազօտական հաստատութիւններու հետ՝ անիկա իր հայրենիքին ու ժողովուրդին հանդէպ իր հետաքրքրութիւնը երբեք չէ կորսնցուցած և տարիներով իր ստորագրութեամբ երեւցած յօդուածներ և ուսումնասիրութիւններ ճոխացուցած են մեր օրաթերթերուն և հանդէսներուն էջերը։

Անհրաժեշտ է Տոքթ. Սեւակը ճանչնալ բուն իսկ իր կալուածին մէջ, աւելի վերահասու ըլլալու համար անոր բազմակողմանի կարողութեանց հետ իր գիտական հանճարին, որ իր վրայ ուշադրութիւնը հրաւիրած է ոչ միայն ամերիկեան այլ և միջազգային գիտական աշխարհին։

Ես առանձնապէս հետաքրքրուած եմ Տոքթ. Սեւակի վերջին երկասիրութեամբ, որ կը կրէ «Immuno-Catalysis» վերտառութիւնը և որուն յառաջաբանը գրած է Փէնսիլվանիայի Համալսարանին մանրէաբանական մասնաճիւղի Փրօֆ. Սթուարթ Մըտ։

Գիրքին բովանդակութիւնը ծայրատիճան մասնագիտական ըլլալով՝ դիմեցի Տոքթ. Սեւակին, որպէս զի զայն խտացնէ «Բազմավէպ»ի ընթերցողներուն համար՝ կարելի եղած չափով պարզ հայերէնով։

Ահա թէ ինչպէս կը պարզաբանէ Տոքթ. Սեւակ իր գիտական նոր տեսութիւնը, զոր քիմիագիտական և բժշկական աշխարհին կը ներկայացնէ իր այս վերջին աշխատութեամբ։

«Այս երկը, կը յայտնէ Տոքթ. Սեւակ, կը ներկայացնէ մասնագիտական նոր տեսութիւն